ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ
ՄՆԱՑԱԿԱՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ N8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ

ՀՀ ք.Գավառ,Հ.Աբրահամյան 4/6
Հեռ. 0264-2-23-79 Էլ. փոստ gavar8@schools.am

№ 730
24.06.2022թ.
023

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ,

Ի լրումն 23.06.2022թ. № 727 գրության, Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհրդի՝ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարության տեքստը :

Առդիր՝ 1 էջ

Դպրոցի ԿԽ քարտուղար՝ Ա. Խաչատրյան

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4)տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում 2022 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվական հոկտեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ Հ. Աբրահամյան փողոց 4/6

Տեղեկությունների համար դիմել Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ.Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցի խորհրդի կողմից լիազորված անդամ Աննա Խաչատրյանին

Հեռախոսահամարը՝ 077-84-77-16, էլեկտրոնային հասցեն՝ annaani@mail.ru